ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» փետրվարի 2026 թվական N 6-Լ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, բնապահպանական և ընդերքօգտագործման պետական վերահսկողության համակարգի կատարելագործման, ինչպես նաև պետություն–մասնավոր հատված համագործակցության և հանրային մասնակցության ապահովման նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել Տեսչական մարմնի ղեկավարին կից խորհրդակցական աշխատանքային խումբ բնապահպանական վերահսկողության բնագավառին առնչվող խնդիրները քննարկելու նպատակով:

2. Սահմանել, որ Տեսչական մարմնի ղեկավարին կից ստեղծվող խորհրդակցական աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել շրջակա միջավայրի պահպանության, ընդերքօգտագործման, թափոնների կառավարման, բնապահպանական իրավունքի և հարակից ոլորտներում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և (կամ) գիտական հաստատությունների

0009, ՀՀ ք. Երևան, Կորյուն փող. 15
hovhannes.martirosyan@ecoinspect.gov.am | info@ecoinspect.gov.am
www.ecoinspect.am
+374 15 488 885 | +374 15 484 848

ներկայացուցիչներ, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող մասնագետներ, Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև բնապահպանական ոլորտում գործող մասնագիտական միավորումների ներկայացուցիչներ: Խորհրդակցական աշխատանքային խմբի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են կամավորության հիմունքներով:

3. Սահմանել, որ Տեսչական մարմնի ղեկավարին կից ստեղծվող խորհրդակցական աշխատանքային խմբի կազմը (առավելագույնը 20 անդամ) ձևավորվում է սույն հրամանի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով ներկայացված թեկնածուներին Տեսչական մարմնի ղեկավարի կողմից հրավեր ուղարկելու և նրանց համաձայնությունը ստանալու արդյունքում: Խմբի կազմը հաստատում է խորհրդակցական աշխատանքային խմբի աշխատակարգը, որով սահմանվում են հիմնական կազմի ձևավորման, դրանում անդամների ընդգրկման, կազմի փոփոխության, անդամության դադարեցման, նիստերի կազմակերպման և անցկացման, որոշումների կայացման ընթացակարգերը:

4. Սահմանել, որ Տեսչական մարմնի ղեկավարին կից ստեղծվող խորհրդակցական աշխատանքային խմբի կազմը կարող է գործել առավելագույնը մեկ տարի ժամկետով՝ մինչև խորհրդակցական աշխատանքային խմբի աշխատակարգով սահմանված կարգով նոր կազմի ձևավորումը:

5. Սահմանել, որ խորհրդակցական աշխատանքային խմբի աշխատանքների կազմակերպման, նիստերի հրավիրման և անցկացման կազմակերպական աշխատանքներն իրականացնում է Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչությունը (այսուհետ՝ Քարտուղարությունը):

6. Տեսչական մարմնի իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետին՝

1) ապահովել սույն հրամանի հասանելիությունը Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պաշտոնական կայքում,

2) խորհրդակցական աշխատանքային խմբի կազմը ձևավորելու նպատակով Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական հարթակներում հրապարակել համապատասխան հրավեր (ժամկետ սահմանել 2026 թվականի մարտի 12-ը):

7. Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Սոնա Շախկյանին՝

1) ապահովել խմբի կազմում ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց ինքնառաջադրման հնարավորությունը համապատասխան պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով,

2) ստացված թեկնածությունները քննարկել և ներկայացնել թեկնածուներ, ովքեր համապատասխանում են սույն հրամանի 2-րդ կետով նկարագրված չափորոշիչներին, որոնց անդամակցությունը խորհրդակցական աշխատանքային խմբին կնպաստի Տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործմանը և պետություն–մասնավոր հատված երկխոսության կայացմանը:

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ